ԿՐԹԱԿԱՆ

# ԱՊՐԻԼԻ 10-ԻՆ ՍԿՍՎՈՒՄ Է ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱՐԱՆՑԻՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ

*Վրաստանի պետական դպրոցներում 2018-2019 ուսումնական տարվա առաջին դասարանցիների համընդհանուր օնլայն գրանցումը կմեկնարկի ապրիլի 10-ին:*




Ըստ Վրաստանի օրենսդրության, առաջին դասարան կարող են ընդունվել այն երեխաները, ում վեց տարին լրանում է մինչեւ սեպտեմբերի 15-ը, այսինքն՝ մինչեւ ուսումնական տարվա սկիզբը:

Այս տարի նախարարությունը հաշվի առավ այն փաստը, որ նոր ուստարին սկսվում է երկու օր ուշացումով, քանի որ սեպտեմբերի 15-ը շաբաթ օր է: Այդ պատճառով, նոր ուսումնական տարում առաջին դասարան կկարողանան հաճախել նաեւ այն երեխաները, ում վեց տարին լրանում է ապրիլի 16-17-ին:

Գրանցում հնարավոր է անցնել www.emis.ge կայքով: Երկրում առաջին դասարանցիների գրանցումը կանցկացվի երեք փուլով:

Առաջին փուլի գրանցումը սկսվում է ապրիլի 10-ին եւ կշարունակվի մինչեւ ապրիլի 27-ը: Այս փուլում գրանցվում են այն երեխաները, ում ծնողներն աշխատում են դպրոցում, ում եղբայրը կամ քույրն արդեն սովորում են այդ դպրոցում եւ նրանց երեխաները, ովքեր մի ընտանիքից առաջին դասարան են ուղարկում երկու եւ ավելի երեխաների:

Այդ երեխաների ծնողները պետք է ապրիլի 30-ից մինչեւ մայիսի 7-ը ընտրված դպրոց ներկայացնեն գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերը:

Երկրորդ փուլը վերաբերում է այն բոլոր երեխաներին, ում 6 տարին լրանում է մինչեւ ուսումնական տարվա մեկնարկը: Այն կսկսվի մայիսի 8-ին եւ կշարունակվի մինչեւ հունիսի 8-ը: Երկրորդ փուլի ընթացքում գրանցված երեխաների ընդունման համար անհրաժեշտ փաստաթղթերի հանձնումը կսկսվի հունիսի 14-ին եւ կշարունակվի մինչեւ հունիսի 30-ը ներառյալ: Երկրորդ փուլում գրանցվում են այն աշակերտները, ովքեր չեն գրանցվել առաջին փուլում:

Երրորդ փուլը կսկսվի գրանցման երկրորդ փուլի ավարտից անմիջապես հետո: Գրանցումը կանցկացվի ոչ թե օնլայն կարգով, այլ այն դպրոցներում, որտեղ կլինեն թափուր տեղեր: Գրանցման ժամանակ ծնողները պետք է ունենան անհրաժեշտ փաստաթղթերը: Նրանք փաստաթղթերը պետք է ներկայացնեն հուլիսի 2-ից մինչեւ 16-ը:

# 2082 ԴՊՐՈՑԻՑ ԱԴԱՊՏԱՑՎԱԾ Է 17-Ը

*Վրաստանում գործող 2082 դպրոցից ադապտացված է միայն 17-ը: Ադապտացված դպրոցներ ասելով՝ ենթադրվում է վերելակի պանդուսի առկայությունը, համապատասխան ձեւավորված սանիտարական հանգույցն ու ռեսուրս-սենյակները:*

Ինչպես նշեցին Վրաստանի պետական աուդիտի ծառայությունում, 167 ադապտացված դպրոցներում միայն 7-ում են սովորում երեխաներ, որոնք տեղաշարժվում են հաշմանդամի սայլակներով, թեպետ նման երեխաներ գրանցված են 233 դպրոցում: Այդ 233 դպրոցներից միայն 101-ը՝ պանդուսներ, 143-ը հարմարեցված սանիտարական հանգույցներ ունեն, իսկ 75-ում չկան ո'չ պանդուսներ, ո'չ էլ սանհանգույցներ:

Պետաուդիտի ծառայության հաշվետվության մեջ նշված է, որ 1235 դպրոցներում սովորում է հատուկ կրթական կարիք ունեցող 6254 երեխա, սակայն 312 դպրոցներում, որտեղ սովորում է 883 աշակերտ, ռեսուրս-սենյակներ չկան:

«1+4» ԾՐԱԳԻՐ

# ՍՏԱԺԱՎՈՐՄԱՆ ՇՆՈՐՀԻՎ, ԵՍ ՀՄՏԱՑԱ ԻՄ ԸՆՏՐԱԾ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ



*Ինչպես արդեն հաղորդել ենք, մայիսի 31-ին սպառվեց հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության հարցերով Վրաստանի պետնախարարի աշխատակազմի, Վրաստանի հանրային ծառայության բյուրոյի եւ Վրաստանի՝ ՄԱԿ-ի ասոցիացիայի համագործակցության «Վրաց լեզվով նախապատրաստման հանրակրթական ծրագիր» («1+4» ծրագիր) նախագծի մասնակցության գրանցման ժամկետը: Մինչ այդ, պիլոտային կարգով 2017 թվականի մայիսից իրականացվող այդ ծրագրով ստաժավորում է անցել ավելի քան 80 ուսանող, որոնց թվում էր նաեւ Նինոծմինդայի Ջիգրաշեն գյուղից այս տարվա Թբիլիսիի Իվանե Ջավախիշվիլու անվան պետական համալսարանի միջազգային ֆակուլտետի բակալավր Արեգնազ Պետրոսյանը: Ձեր ուշադրությանն ենք ներկայացնում նրա տպավորությունները անցած ստաժավորումից:*

- Ստաժավորման ծրագիրն աննախադեպ առաջընթաց էր ազգային փոքրամասնությունների ինտեգրման հարցում: Այն հնարավորություն տվեց մեզ՝ էթնիկ հայ ու ադրբեջանցի ուսանողներիս, զգալ մեր երկրի արժանի քաղաքացիներ:

Ես մեկն էի այն ուսանողներից, ով առաջին իսկ օրերին, առանց վարանելու, լրացրեց մասնակցության հայտը: Հարցազրույցից հետո, ես դարձա երկրի արդարադատության նախարարության պրակտիկանտ:

Ստաժավորումն անցնելու էի Վրաստանի ազգային արխիվում: Անկեղծ ասած, առաջին օրերին վախով էի մոտենում գործին: Թվում էր՝ ոչինչ չի ստացվելու, բայց շնորհիվ հրաշալի կոլեկտիվի, ինձ հաջողվեց հաղթահարել վախս: Կամաց-կամաց հմտանում էի կատարածս գործի մեջ: Սիրով էի լրացնում դիմումները, առավել քան ակնածանքով էի վերաբերվում հայրենի Ջավախքիս վերաբերյալ արխիվում պահվող փաստաթղթերին: Որոշեցի, ու երեք ամսվա ընթացքում ինձ հաջողվեց կարգի բերել այդ փաստաթղթերը:

Որոշ մասնակիցներից լսել եմ բողոքներ, որ նախագիծը զուտ ժամանակի կորուստ է, որ հանրային կառույցներում ոչ ոք ուշադրություն չի դարձնում: Բայց չպետք է մոռանալ, որ, իր թերություններով հանդերձ, նախագիծը մեզ հնարավորություն տվեց նախ ավելացնել պետական լեզվի պաշարն ու պրակտիկան եւ, ամենագլխավորը, ձեռք բերել մեծ կոլեկտիվում աշխատելու ունակություններ: Մեզանից շատերի համար այն խթան հանդիսացավ նաեւ աշխատանք գտնելու հարցում: Եվ, ի վերջո, նախագիծը մեզ հնարավորություն տվեց՝ բացել նախարարությունների, գերատեսչությունների եւ հանրային կառույցների դռները՝ թեկուզ ժամանակավոր աշխատակցի կարգավիճակով:

Ինչ վերաբերում է ինձ, ապա 2017 թվականին ավարտեցի Իվ. Ջավախիշվիլու անվան պետական համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետը, ապա ընդունվեցի Իլիայի անվան պետական համալսարան: Մասնագիտական գիտելիքներս որոշել եմ խորացնել եւ նորից ուսումս շարունակում եմ միջազգային հարաբերությունների ֆակուլտետում:

Ստաժավորումից անմիջապես հետո, աշխատանքի եմ ընդունվել՝ որպես երկլեզու ուսուցչի օգնական Նինոծմինդայի շրջանի Ջիգրաշեն գյուղում:

Ուզում եմ խորհուրդ տալ մեր հայ ու ադրբեջանցի ընկերներին. «Մասնակցեք այս նախագծին: Հավատացեք, կորցնելու ոչինչ չունեք: Ընդհակառակը, սա շատ լավ հնարավորություն է հետագա աշխատանքային առաջընթացի եւ մեր երկրի լիարժեք քաղաքացի դառնալու համար»:

***ԱՐԵԳՆԱԶ ՊԵՏՐՈՍՅԱՆ***
***Թբիլիսիի Իլիայի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետի մագիստրատուրայի ուսանող***

ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ՕՐԱԳՐԻՑ

# ԽՈԺՈՌՆԻԻ ԳՐԱՌՈՒՄՆԵՐԸ

(Սկիզբը՝ 4-րդ էջում)

**ԳՐԱՌՈՒՄ ԵՐՐՈՐԴ**

...Դեռեւս համակերպման փուլում եմ: Միակ վրացին եմ գյուղում, թեպետ լսել եմ, որ երկու վրացի հարս են ունեցել, սակայն երեխաները միայն դպրոցում սովորած վրացերեն բառերը գիտեն... Մի խոսքով, գտնում եմ, որ միակ վրացին եմ:

Ցավոք, բնակչության, գործընկերներիս որոշ մասի հետ հաղորդակցվում եմ ռուսերենով: Իհարկե, գյուղում բոլորը ճանաչում են ինձ եւ ձգտում վրացերեն բարեւել, ժպիտով են դիմավորում:

Նոր էի եկել, երբ գործընկերներիցս մեկը Սվանեթիայի մասին հարցրեց, իսկ երկրորդը քարտեզի վրա գտավ, թե որտեղից ուր եմ եկել, ու շատ զարմացավ: Երրորդը հարցրեց, թե սվաներեն ինչպես է հնչում «բարեւ» բառը: Մեկ շաբաթ հետո մտա ուսուցչանոց, նստեցի եւ հանկարծ լսեցի՝ «Խոչա լադաղ»: Ուրախացա եւ բարձրաձայն ծիծաղեցի: Որքան ջերմ, հյուրընկալ ու հոգատար են խոժոռնեցիները: Այստեղ իրականում ջերմ են, ուշադիր, հյուրասեր:

**ԳՐԱՌՈՒՄ ՉՈՐՐՈՐԴ**

- Ինչպե՞ս է Ձեզ դուր գալիս մեր գյուղը, տիկին,- մաքուր վրացերենով ինձ ուղղված հարցը հանկարծակիի բերեց: Զարմացած շրջվեցի, եւ տարիքով տղամարդը ժպտաց: Ինչ խոսք, պատասխանեցի ես եւ հարցը շրջադարձեցի՝ որտեղի՞ց գիտեք վրացերեն: Նա պարզաբանեց, որ ապրում է Թբիլիսիում, սակայն, ամռանը գալիս է գյուղ եւ մնում մինչեւ աշուն...



Արդեն տեղյակ եմ տեղացիների հիմնախնդիրներին, իսկ ամենաառաջնայինն ու ամենակարեւորը ջուրն է: Այս պարոնն էլ ցավով նշեց, որ մի քանի անգամ բարձրացվել է ջրի հարցն ու կարգավորվել: Ձմռանը սառչում է, եւ գյուղում բոլորը ջուրը բերում են հեռու աղբյուրից...

**ԳՐԱՌՈՒՄ ՀԻՆԳԵՐՈՐԴ**

Խոժոռնիում անտառ կա, բայց վառելափայտի հարցը գյուղին անհանգստություն է պատճառում, բնապահպանները շատ խիստ են եւ տուգանում են, այդ պատճառով վառելափայտը թանկ գնով են ձեռք բերում: Նախկինում, անտառում սունկ, հատապտուղ էին հավաքում, վաճառում եւ մի փոքր եկամուտ ստանում: Շիրիմների մի մասն էլ Հայաստանի տարածքում են: Սակայն, այստեղ սահմանային անցակետ չկա, եւ եթե սահմանը խախտես ու ինքնուրույն անցնես, կբռնեն ու կտուգանեն սահմանը խախտելու համար: Երբ այդ մասին իմացա, սիրտս ցավեց:

**ԳՐԱՌՈՒՄ ՎԵՑԵՐՈՐԴ**

Այս երեխաներն այնքան սիրելի են, որ մեկի ժպիտն անգամ բոլոր ցավերն ու հոգսերը մոռացության են մատնում: Ահա Մարտունին. երրորդ դասարանցի է, նույնպես լուսավորում է շրջապատն իր հայացքով ու ժպիտով: Ժպտալիս երեւում են նապաստակի ատամներ հիշեցնող նրա երկու ատամիկները: Որքան էլ վատ տրամադրություն ունենամ, այն անմիջապես անցնում է: Մարիամը թխահեր է, սակայն, երբ ժպտում է, շատ է նմանվում արեւին: Անուշն ու Գիորգին երկվորյակներ են: Աղջիկը գրում է ձախ ձեռքով, դանդաղ, սակայն, խոստովանում եմ, շատ գեղեցիկ: Ասում են, ավագ քրոջ ամուսնությունից հետո, Արթուրը հազվադեպ է ժպտում: Բայց չէ՞ որ նրան էլ է ժպիտը սազում: Առաջին դասարանցի Միլենան լուսատտիկ է հիշեցնում, երկրորդ դասարանցի Մեխակը՝ «Երալաշի» պատանի: Գրատախտակի մոտ կանգնած, ձախ ձեռքի ցուցամատը ճակատի մոտ է պահում, իսկ կավճոտ աջ ձեռքով ոգեւորված շարժումներ է անում, դեմքն այնպես է լարում, կարծես անկանխատեսելի հայտնագործություն է կատարելու: Զինան սիրում է երգել, Նարեկը լիդեր է:

Մի անգամ վեցերորդ դասարանի Գագիկին ընկերաբար ձեռքով ողջունեցի, դրանից հետո միշտ այդպես ենք բարեւում իրար: Դասարանում ութը աղջիկներ են եւ այդ պատանին... Հինգերորդ դասարանի Նարեկը հանգիստ, ներքուստ կիրթ, չափավորված վարքով պատանի է, իսկ ահա Յուրին, նրա հակապատկերն է: Ընդհանրապես, չի ցանկանում սովորել, թեպետ շատ է ցանկանում մանկավարժ դառնալ ու հայերեն դասավանդել: Վրացերեն տառերով հայկական նախադասություններ է գրում... Անին «կեկելկա» է, իսկ Սեդան՝ հանգիստ, լուրջ: Չորրորդ դասարանցիներն ունեն անհանգիստ Գրիգոր ու Էմմի, իսկ Նարեն ու Լիլիթը հաճախ են բանավիճում: Նկատում եմ, որ բնավորությամբ հանգիստ Նարեին այնքան էլ դուր չեն գալիս Լիլիթի դիտողությունները, իսկ ինչ վերաբերում է Շավարշին, ապա նա հավասարակշռված է եւ դասերին միշտ պատրաստ...

Մեր դպրոցի մյուս թեւում ադրբեջանցի երեխաներն են սովորում, նրանց չեմ դասավանդում, սակայն առավոտյան եւ ընդմիջումներին փոքրիկները ձգտում են աչքի ընկնել, բարեւում են, վրացերեն հարցեր տալիս, աչքերը թարթում... Այստեղ ազգությունն ու կրոնը սահման չունի, այստեղ՝ սահմանամերձ Խոժոռնի գյուղում, բարյացակամություն է տիրում:

## ՀԱՐՑ - ՊԱՏԱՍԽԱՆ ❋ ԱՅԼԱԶԱՆ ❋ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

**ՍՈՒՐՃԻ ՓՈԽԱՐԵՆ**

### ԱՅԼ ԸՄՊԵԼԻՔՆԵՐ



***Սովորություն է դարձել՝ օրական խմում եմ 6 եւ ավելի բաժակ սուրճ: Շատերն ասում են, որ սուրճը չարաշահում եմ, եւ դա վտանգավոր է: Գուցե ճիշտ են, միայն թե կոնկրետ չեն ասում, թե ինչո՞վ կարող եմ փոխարինել սուրճը:***

***Մ. Գեւորգյան***

***Նինոծմինդա***

*Սուրճն իր կազդուրիչ ազդեցությամբ գրավում է այն պահերին, երբ հոգնած մարմինդ լիցքավորելու կարիք ես զգում: Սակայն, ինչպես ասում են, անփոխարինելիներ չկան: Այնպես որ, երբեմն էլ կարելի է բազմազանություն մտցնել, եւ սուրճը փոխարինել ուրիշ ըմպելիքներով:*

**1.Կիտրոնով եւ մեղրով տոնիկ** - Այս ըմպելիքը ոչ միայն խթանում է աշխատունակությունը, այլեւ բարենպաստ է նիհարելու եւ օրգանիզմի դիմադրողականությունը բարձրացնելու առումով: Մեկ բաժակ գոլ ջրի մեջ կիտրոնի 1-2 շերտ գցեք, 1թ. գդալ մեղր եւ լավ խառնեք: Կարելի է նաեւ 1 թ. գդալ դարչին ավելացնել:

**2.Կակաո՝ նարինջի հյութով** - Ոչ միայն կբարձրացնի ձեր տրամադրությունը, այլեւ կիագեցնի եւ կնպաստի խոլեստերինի քանակի կարգավորմանը: Այն պատրաստելու համար, պետք է նարինջի կեղեւի արտաքին շերտը քերել, կես նարինջի հյութ քամել եւ կաթով կակաոյի մեջ ավելացնել նարինջի հյութն ու քերուկը: Կարելի է նաեւ մի քիչ մեղր լցնել:

**3.Կոճապղպեղով թեյ** - Ի տարբերություն սուրճի, խթանիչ ազդեցությունը շատ ավելի երկար է պահպանվում: Կոճապղպեղի բույրը հոգնածությունն անցկացնող եւ տրամադրությունը բարձրացնող հատկություն ունի: Հատկապես օգտակար է մտավոր աշխատանքով ծանրաբեռնվելու դեպքում: Այն պատրաստելու համար պետք է կոճապղպեղի մի փոքր արմատ կլպել, մանր կտրտել եւ վրան եռջուր լցնել: Համի համար կարելի է մեղր եւ կիտրոն ավելացնել կամ անանուխ:

**4.Կանաչ թեյ՝ հասմիկով (ժասմին)** - Այս թեյը նույնպես սուրճի պես բարձրացնում է տոնուսը, քանի որ կոֆեին է պարունակում, սակայն դրա ազդեցությունը մի փոքր ավելի ուշ է վրա հասնում: Կանաչ թեյը նաեւ մեծ քանակությամբ կատեխիններ է պարունակում, որոնք օժտված են մանրէազերծիչ եւ հակաուռուցքային ազդեցությամբ: Այս թեյին կարելի է նաեւ կիտրոն ավելացնել, բայց գլխավոր պայմանն այն է, որ ջրի ջերմաստիճանը 80-85°C-ից բարձր չլինի:

**ՍՆՆԴԱԿԱՐԳ**

### ԱՐԱԳ ՍՆՆԴԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ



***Ժամանակի սղության պատճառով, արդեն երկար ժամանակ է՝ օգտվում եմ արագ սննդի հաստատությունների ծառայություններից: Հիմա ստամոքսի հետ կապված հիմնախնդիրներ ունեմ: Որքանո՞վ է դա առնչվում արագ սննդի հետ:***

***Զ. Մանուկյան***

***Բաթումի***

33-ամյա ամերիկացի լրագրող Մորգան Սփարլոուքը մի հետաքրքիր փորձ է անցկացրել: Նա որոշում է կայացրել՝ զոհել իր առողջությունը եւ սեփական փորձով պարզել, թե ինչ ազդեցություն է ունենում «արագ» սնունդը մարդու օրգանիզմի վրա: Փորձն սկսելուց առաջ, Մորգանը ենթարկվում է մանրակրկիտ բժշկական հետազոտության, որը ցույց է տալիս, որ նա առողջության հետ կապված որեւէ խնդիր չունի: Այնուհետեւ, նա մեկ ամսվա ընթացքում ամեն օր, օրական երեք անգամ սնվել էր արագ սնունդ առաջարկող խորտկարաններում: Փորձի արդյունքն առավել, քան տխուր է լինում: Մորգանի քաշն ավելացել էր 12 կիլոգրամով, արյան մեջ խոլեստերինի քանակը մի քանի անգամ գերազանցում էր թույլատրելիի սահմանը, կրկնակի մեծացել էր ինֆարկտ ստանալու վտանգը, իսկ լյարդը նմանվել էր հարբեցողի լյարդի: Մինչդեռ, փորձի ընթացքում նա լիովին հրաժարվել էր ալկոհոլային խմիչքներ օգտագործել: Եվ սա դեռ ամենը չէ: Կտրուկ վատացել էին նրա հարաբերությունները հակառակ սեռի ներկայացուցիչների հետ, իսկ լրագրողական ընդունակությունները զգալիորեն նվազել էին:

**ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ**

## ԵՐԿՈ՞Ւ, ԹԵ՞ ԱՎԵԼԻ ԵՐԵԽԱ

***Շատ մարդիկ նախընտրում են սահմանափակվել մեկ կամ երկու երեխայով: Ահա մի քանի պատճառ ձեր երեխային փոքրիկ քույրիկ կամ եղբայր պարգեւելու համար.***



**1.** Երրորդ երեխայի ծնունդը կստիպի մեծ երեխաներին կիսվել նրա հետ, ինչի կարիքը վերջինս կարող է ունենալ: Դա նաեւ կսովորեցնի նրանց մարդկանց հետ հարաբերություններ հաստատել, հաղթահարել տարբեր խնդիրներ: Հոգեբանները պնդում են, որ այն մարդիկ, ովքեր քույրեր կամ եղբայրներ ունեն, պակաս եսասեր են, քան ընտանիքի միակ երեխաները:

**2.** Երրորդ երեխայի լույս աշխարհ գալը, հակառակ ընդունված կարծիքի, չի ավելացնի ծնողների ուսերին եղած բեռը, այլ կնվազեցնի այն: Փոքրիկի հետ այդքան շատ խաղալու կարիք չի լինի, քանի որ երեխան կարող է խաղալ մեծ քույրիկի կամ եղբոր հետ: Իսկ ծնողներն այդ ընթացքում կարող են հանգստանալ:

**3.** Առաջին եւ երկրորդ երեխաների լույս աշխարհ գալը ցանկացած ընտանիքի համար ուրախալի իրադարձություն է, երրորդը պակաս երջանկություն չի բերի:

**4.** Փոքրիկ քույր կամ եղբայր ունենալու դեպքում, մեծ երեխան կսովորի հարթել կոնֆլիկտային իրավիճակները: Այս հմտությունը կյանքում շատ պետք կգա:

**5.** Երբ սովորեցնեք ձեր երեխային, որ պետք է օգնել ուրիշներին, սրտացավ ու կարեկից լինել, նա շատ ավելի հեշտ կսերտի այս դասերը, եթե կարողանա այս ամենը կիրառել իր փոքր քրոջ կամ եղբոր նկատմամբ:

**ԳԻՏԵ՞Ք, ԱՐԴՅՈՔ...**

## ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՐՋԱՆԿՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԼԻՆ

***Բոլոր մարդիկ ցանկանում են լինել առողջ, երջանիկ, հաջողակ: Սակայն ներկայիս անհանգիստ աշխարհում շատ քչերին է վիճակված գիտակցել, թե ինչպես կարելի է այդ ամենը ձեռք բերել:***



Ավա՜ղ, ժամանակակից կյանքի խելագար թոհուբոհում մարդիկ մոռանում կամ պարզապես անտեսում են դարավոր իմաստնությունն այն մասին, որ իրական հաջողության եւ առողջության կարելի է հասնել միայն ֆիզիկականի եւ հոգեւորի միասնությամբ:

Համաշխարհային բոլոր կրոնական ուսմունքների հիմքում հենց այն գաղափարն է, որ մարդը ոչ թե պարզապես ֆիզիկական մարմին է, այլ, նախեւառաջ, էներգատեղեկատվական մարտկոց: Ֆիզիկական մարմնի հետ կատարվող ամեն ինչի հիմքում հենց էներգիան է, որը նաեւ մեզ կապում է մյուս մարդկանց հետ: Այդ իսկ պատճառով, առողջության, շրջապատի մարդկանց հետ ներդաշնակության հասնելու, ինչպես նաեւ դրական իրավիճակներ ձեւավորելու համար մարդը պետք է կարողանա դրական լիցքեր հաղորդել եւ ճիշտ ուղղորդել այդ էներգիան:

## ԹԵՎԱՎՈՐ ՄՏՔԵՐ



Անցյալի պատմությունը մի լուսատու լապտեր է, որ ամեն մի ժողովուրդ ձեռքին պետք է ունենա իր ճամփեն անմոլոր գնալու համար:

***ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆ***
***(1869-1923)***
***Ամենայն հայոց բանաստեղծ***

Կինը եւ երեխաները սովորեցնում են մարդկություն, իսկ ամուրիները մռայլ են եւ դաժան:

***ՖԵՆԵՍԻՍ ԲԵԿՈՆ***
***(1561-1626)***
***Անգլիացի փիլիսոփա***

Ազատությունը հաց է, որ ժողովուրդները պետք է վաստակեն ճակատի քրտինքով:

***ԴԻՈԳԵՆԵՍ***
***(մ.թ.ա.412-մ.թ.ա.323)***
***Հույն փիլիսոփա***

Մարդը միակ կենդանին է, որ կարմրում է:

***ՄԱՐԿ ՏՎԵՆ***
***(1835-1910)***
***Ամերիկացի գրող***

Ի՞նչ է հիվանդությունը, եթե ոչ կյանքի ազատության սահմանափակում:

***ԿԱՐԼ ՄԱՐՔՍ***
***(1818-1883)***
***Գերմանացի փիլիսոփա***

Ձեր գանձը ընտանիքի, սիրեցյալի, հարազատների եւ ընկերների հանդեպ սերն է:

***ՍԹԻՎ ՋՈԲՍ***
***(1955-2011)***
***Ամերիկացի ճարտարագետ***

Վատ պետական գործիչներն ընտրվում են քվեարկությանը չմասնակցող... լավ քաղաքացիների կողմից:

***ՆԱԹԱՆ***
***(1913-1978)***
***Ուկրաինացի խորհրդային գրող***

Թե' ամուսնությունը, թե' չամուսնանալն ունեն իրենց թերությունները. այս երկու վիճակներից գերադասելի է այն, որը դեռեւս հնարավոր է ուղղել:

***ՇԱՄՖՈՐ***
***(1741-1794)***
***Ֆրանսիացի գրող***

## ԱՆԵԿԴՈՏՆԵՐ

*☺ Ամուսինը՝ կնոջը.*

*- Էս ո՞ւր:*

*- Խանութ:*

*- Բա փող վերցրե՞լ ես:*

*- Հա', վերցրել եմ:*

*- Դե', նայի հա՜, շատ չծախսես...*

*☺ Հյուրը, ցույց տալով տղամարդու լուսանկարը, հարցնում է տանտիրուհուն.*

*- Իսկ սա ո՞վ է:*

*- Սա իմ խեղճ ամուսինն է,- հոգոց հանելով՝ պատասխանում է տանտիրուհին:*

*- Վա՜յ, կներեք, ես չգիտեի, որ նա...*

*- Չէ', չէ', ոչինչ չի պատահել: Պարզապես նա իրոք խեղճ է:*

*☺ Փոքրիկ տղային հարցնում են:*

*- Ո՞ւմ ես ավելի շատ լսում՝ մամայի՞ն, թե՞ պապայի՞ն:*

*- Մամային...*

*- Ինչո՞ւ:*

*- Ինքը ավելի շատ ա խոսում...*

*☺ Փոքրիկ տղան աղմկելով «շրջագայում է» իրենց տանը:*

*- Բալե'ս, ի՞նչ ես անում,- հարցնում է մայրը:*

*- Էն խաղն եմ խաղում, որ պապան ա ամեն առավոտ խաղում:*

*- Էդ ի՞նչ խաղ ա:*

*- Չգիտեմ, էստեղից-էնտեղ ա գնում, էնտեղից-էստեղ ու ջղայնացած գոռում. «Ո՞ւր ա իմ փողկապը, ո՞ւր ա իմ փողկապը»:*

*☺ Քահանան.*

*- Ուտելուց առաջ աղոթու՞մ ես, որդյակս:*

*- Ո'չ, տեր հայր: Իմ կինը լավ խոհարար է...*

*☺ Ամուսինը նայում է հեռախոսավճարի տեղեկանքն ու հարցնում կնոջը.*

*- Էդ ո՞ւմ հետ ես այդքան հաճախ Վրաստան խոսել...*

*- Ոչ մեկի, դու գիտես, որ հեռախոսով միայն մայրիկիս հետ եմ խոսում:*

*- Ուզում ես ասել, որ մայրդ այնքան է չաղացել, որ էլ Հայաստանում չի՞ տեղավորվում...*

# ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

## ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ «ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ» ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՀԵՏ



*Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը հանդիպում է ունեցել «Երիտասարդ գիտնականների աջակցության ծրագրի» (ԵԳԱԾ) ղեկավար կազմի հետ: Հանդիպմանը ներկա է եղել նաեւ ծրագրի խորհրդատու, կրթության եւ գիտության նախարար Լեւոն Մկրտչյանը:*

2012-2017թթ. ԵԳԱԾ-ի գործունեության արդյունքները, անդրադարձել նաեւ հետագա անելիքներին:

Երիտասարդ գիտնականները զեկուցել են Հայաստանի նախագահի հովանու ներքո իրականացվող վերոնշյալ ծրագրի շրջանակներում 2017 թվականին իրականացված աշխատանքները, ամփոփել

Հայաստանում գիտության առաջընթացին եւ կադրային ներուժով համալրմանը, ինչպես նաեւ երիտասարդ գիտնականների ստեղծագործական զարգացմանը նպաստելու նպատակով ստեղծված ծրագիրը, երիտասարդների գնահատմամբ, լիովին ծառայում է իր նպատակին եւ մեծ խթան է գիտությամբ զբաղվելու ցանկություն ունեցող երիտասարդների համար:

Հանդիպմանը ներկա երիտասարդ գիտնականները շնորհակալություն են հայտնել Հանրապետության նախագահին ծրագրի մեկնարկից ի վեր մշտապես իրենց կողքին լինելու եւ զգալի աջակցություն ցուցաբերելու համար: Սերժ Սարգսյանը վստահեցրել է, որ, ելնելով ծրագրի կարեւորությունից ու արդյունավետությունից, այն շարունակվելու է, եւ հորդորել երիտասարդներին այսուհետ եւս ակտիվ աշխատել, նոր մտահղացումներով ու նախաձեռնություններով զարգացնել ծրագիրը:

## ՎԻԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ. «ԲԱԶՄԱԿԵՆՏՐՈՆ ԱՇԽԱՐՀԻ» ԲՈԼՈՐ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՏԱԼԻՍ Է ԻՐ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ»




*Ապրիլի 4-ին Հայաստանի պաշտպանության նախարար Վիգեն Սարգսյանը, ելույթ ունենալով Միջազգային անվտանգության հարցերով մոսկովյան 7-րդ համաժողովում, հայտարարեց, որ Հայաստանը բազմակենտրոն աշխարհի ընձեռած լայն հնարավորությունների օգտագործման ակնառու օրինակ է:*

- Անկախության առաջին իսկ օրերից մենք հաճախ լսել ենք, որ պետք է կատարել աշխարհաքաղաքական ընտրություն՝ «կամ, կամ» սկզբունքով: Մեր մոտեցումը մշտապես բխել է այն համոզմունքից, որ երկրի դիրքորոշումը այս կամ այն գործընթացի, առավել եւս՝ այլ պետությունների հետ փոխհարաբերությունների նկատմամբ, պետք է հիմնված լինի փոխադարձ խորը հարգանքի եւ ընդհանուր, համատեղ՝ պատմությանը եւ արժեհամակարգին հարիր վերաբերմունքի վրա, որոնց շուրջ էլ կառուցվում է քաղաքականությունը:

Եվ սա, առաջին հերթին, վերաբերում է անվտանգության խնդիրներին,- ասաց նախարարը եւ հավելեց, որ Հայաստանը լուրջ ջանքեր է գործադրում, որպեսզի բոլորի համար ակնհայտ լինի, որ մեր քաղաքականությունը կառուցվում է ոչ թե տարածաշրջանային եւ գլոբալ դերակատարների դիմակայության մանիպուլյացիայի գոտում, այլ ընդհակառակը՝ նրանց շահերի խաչման կետում:

Վիգեն Սարգսյանը հիշեցրեց, որ «բարյացակամորեն» տրամադրվածներն ամենուր են, ովքեր լոբբիստների, ԶԼՄ-ների, հետազոտական կենտրոնների միջոցով փորձում են Հայաստանը Արեւմուտքին ներկայացնել որպես «Ռուսաստանի կառավարման տակ գտնվող խամաճիկային պետություն», իսկ Ռուսաստանի աչքում՝ որպես «փախստակ, որը փորձում է միաժամանակ նստել երկու աթոռի վրա»:

- Բարեբախտաբար, «բազմակենտրոն աշխարհի» բոլոր կենտրոնների հետ հարաբերությունների համակարգի զարգացման ուղղությամբ Հայաստանի հետեւողական ու թափանցիկ քաղաքականությունը տալիս է իր արդյունքները: Բառացիորեն մի քանի շաբաթ առաջ անցկացված անվտանգության հարցերով Մյունխենյան համաժողովի շրջանակներում կայացած նիստին՝ նվիրված Եվրոպայի եւ Ռուսաստանի միջեւ հարաբերություններին, բոլոր ելույթ ունեցողները՝ ինչպես Ռուսաստանի Դաշնությունից, այնպես էլ՝ եվրոպական կառույցներից, բերում էին Հայաստանի օրինակը՝ որպես փոխգործողության իր ձեւաչափերը առավել արդյունավետորեն համադրող երկիր,- ասաց Հայաստանի պաշտպանության նախարարը:

## ԴԵՊԻ ՀԱՅԱՍՏԱՆ ԱՆՁՆԱԿԱՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԸ ԱՎԵԼԱՑԵԼ ԵՆ 12, 4 ՏՈԿՈՍՈՎ



*Դեպի Հայաստան անձնական դրամական փոխանցումները 2017-ի հունվար-դեկտեմբերին կազմել են 1 միլիարդ 494.6 միլիոն դոլար, ինչը 2016-ի համեմատ ավելի է 12,4 տոկոսով կամ 164,5 միլիոն դոլարով:*

Տնային տնտեսությունների անձնական տրանսֆերտները, որոնք գոյանում են արտերկրում մշտապես ապրողների կողմից դրամական փոխանցումների արդյունքում, կազմել են 680,9 միլիոն դոլար՝ աճելով 72,3 միլիոն դոլարով: Կապիտալ տրանսֆերտները նախորդ տարի եղել են 31 միլիոն դոլար՝ աճելով 13,5 միլիոն դոլարով:

Արտերկրում սեզոնային աշխատողների կողմից ստացված զուտ աշխատավարձը (առանց վճարված եկամտահարկի, միջազգային տրանսպորտային ծախսերի, արտերկրում կատարված այլ ծախսումների), նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, աճել է 65,6 միլիոն դոլարով՝ կազմելով 652,5 միլիոն դոլար:

Որպես ծառայություն դասակարգված սեզոնային աշխատողների (արտերկիր սեզոնային աշխատանքի մեկնողների մի մասի ստացած եկամուտը դասակարգվում է ոչ թե որպես աշխատավարձ, այլ որպես ծառայությունների արտահանում: Նրանց դեպքում չկան գործատու-աշխատող հարաբերություններ) աշխատանքների դիմաց ստացված զուտ եկամուտները կազմել են 130,2 միլիոն դոլար՝ աճելով 13,1 միլիոն դոլարով:

Պետական հատվածի տրանսֆերտների զուտ ներհոսքը, 2017 հունվար-դեկտեմբերին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, աճել է 30 միլիոն դոլարով եւ կազմել 200,1 միլիոն դոլար, որի 94,9 տոկոսը կամ 189,9 միլիոն դոլարը ընթացիկ պետական տրանսֆերտներն են, իսկ մնացած 10,2 միլիոն դոլարը՝ կապիտալ տրանսֆերտներ:

## Forbes-Ի ՄԻԼԻԱՐԴԱՏԵՐԵՐԻ ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ՝ ՀԱՅԱԶԳԻ ԵՐԵՔ ԳՈՐԾԱՐԱՐ

*Ամերիկյան «Forbes» հանդեսի կազմած աշխարհի ամենահարուստ մարդկանց վարկանիշային ցուցակում ընդգրկվել են ծագումով հայ երեք գործարարներ: «Միլիարդատերեր-2018» վարկանիշում Ռուսաստանում գործունեություն ծավալող «Մագնիտ» ցանցի հիմնադիր, «Կրասնոդար» ֆուտբոլային ակումբի նախագահ Սերգեյ Գալիցկինը (Հարությունյան)՝ 4 միլիարդ դոլար կարողությամբ, զբաղեցնում է 550-րդ հորիզոնականը:*

«Տաշիր» ընկերությունների խմբի հիմնադիր եւ նախագահ Սամվել Կարապետյանը՝ 3,7 միլիարդ դոլար կարողությամբ, տեղ է գտել 606-րդ հորիզոնականում: 2,7 մլրդ դոլար կարողությամբ արգենտինահայ գործարար, Հայաստանի ազգային հերոս Էդուարդո Էռնեկյանը զբաղեցնում է 887-րդ տեղը:

«Միլիարդատերեր-2018» վարկանիշային աղյուսակի առաջին հորիզոնականը՝ 112 մլրդ դոլար կարողությամբ, զբաղեցնում է Amazon-ի սեփականատեր Ջեֆ Բեզոսը, 90 մլրդ դոլարով՝ նրան հաջորդում է Microsoft-ի հիմնադիր Բիլ Գեյթսը, իսկ 84 մլրդ-ով երրորդ տեղում ամերիկացի ներդրող Ուորեն Բաֆեթն է:

Ամենահարուստների տասնյակում են ընդգրկվել նաեւ LVMH ընկերությունը ներկայացնող ֆրանսիացի Բեռնար Առնոն՝ 72 մլրդ կարողությամբ, Facebook-ի հիմնադիր Մարկ Ցուկերբերգը՝ 71 մլրդ-ով, Zara-ի հիմնադիր Ամանսիո Օրտեգան՝ 70 մլրդ-ով, մեքսիկացի գործարար Կառլոս Սլիմը՝ 67,1 մլրդ-ով, ամերիկացի Կառլոս Կոչը՝ 60 մլրդ-ով, նույնքան կարողությամբ Դեւիդ Կոչը եւ ամերիկացի Լարի Էլիսոնը՝ 58,5 մլրդ դոլար կարողությամբ:

## ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ՝ ՆՎԻՐՎԱԾ ՍՈՒՐԲ ԶԱՏԿԻ ՏՈՆԻՆ



*Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը եւ տիկին Ռիտա Սարգսյանը, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, ապրիլի 1-ին ներկա են գտնվել Հիսուս Քրիստոսի հրաշափառ Հարության՝ Սուրբ Զատկի տոնի առիթով մատուցված Հայրապետական Սուրբ պատարագին: Հայաստանի նախագահի հետ միասին պատարագին ներկա էին Հայաստանի նորընտիր նախագահ Արմեն Սարգսյանը, վարչապետ Կարեն Կարապետյանը, երկրի գործադիր եւ օրենսդիր մարմինների ներկայացուցիչները, Հայաստանում հավատարմագրված դիվանագետներ:*

### 224 ՊԼԱՆՇԵՏ՝ ԵՐԿՈՒ ԱՄՍՈՒՄ

*Հայաստանի ազգային վիճակագրական ծառայության հրապարակած տվյալների համաձայն, 2018թ. առաջին երկու ամսում Հայաստանում արտադրվել է 224 պլանշետ: 2017թ. համանման ցուցանիշի համեմատ, արտադրության ծավալներն աճել են 56 անգամ: Միեւնույն ժամանակ, համակարգիչների արտադրությունը նվազել է 30,3%-ով եւ կազմել 50 հատ: Այս տարվա հունվար-փետրվար ամիսներին Հայաստանում սմարթֆոններ չեն արտադրվել:*

### ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԾԱՎԱԼԸ ՀՆԳԱՊԱՏԿՎԵԼ Է

*Մարդասիրական օգնության կարգով, այս տարվա հունվար-փետրվարին Հայաստան է ներմուծվել 372 տոննա ապրանք, որի արժեքը կազմել է 26 մլն 854,1 հազար ԱՄՆ դոլար: Նախորդ տարվա նույն ժամանակում, Հայաստան է ներմուծվել 5 մլն 53,1 հազար դոլար արժողությամբ 339,2 տոննա ապրանք:*

*Ստացված օգնության մեջ մեծ ծավալ են կազմել քիմիայի եւ դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանքները՝ շուրջ 12 մլն 510,5 հազար դոլար, սարքերը եւ ապարատները՝ 11 մլն 412,7 հազար դոլար, մեքենաները, սարքավորումները եւ մեխանիզմները՝ 1545,2 հազար դոլար: Ամենաշատ մարդասիրական օգնություն է տրամադրել Միացյալ Նահանգները՝ 16 մլն 52,7 հազար դոլար, այնուհետեւ Չինաստանը՝ 1 մլն 693,0 հազար դոլար եւ Հնդկաստանը՝ 1 մլն 28,4 հազար դոլար: ԵՄ երկրներից ստացվել է 784,4 հազ. դոլարի օգնություն: ԱՊՀ երկրներից 2018-ի հունվար-փետրվարին մարդասիրական օգնություն չի ստացվել:*

### ՊԱՅԹՅՈՒՆ՝ ԵՐԵՎԱՆԻ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՊՈՂՈՏԱՅՈՒՄ

*Հյուսիսային պողոտայում գտնվող արագ սննդի կետում պայթյունի հետեւանքով, Երեւանի Գրիգոր Լուսավորիչ բժշկական կենտրոն է տեղափոխվել 8 տուժած, որոնցից մեկը գտնվում է ծայրահեղ ծանր վիճակում: Պայթյունի հետեւանքով, տուժել է Հայաստանի եւ Ռուսաստանի 3-ական եւ Իրանի 2 քաղաքացի: Ինչպես հայտնեցին Գրիգոր Լուսավորիչ բժշկական կենտրոնի վերակենդանացման բաժանմունքից, մնացած 7-ի վիճակը գնահատվում է կայուն ծանր: Պայթյունի նախնական պատճառը թթվածնի բալոնն է եղել:*

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՐՈՐԴՆԵՐԻ

# ՍՊԱՌՎԵՑ ՄԻՆՉԵՎ 2006 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 1-Ը ՏՐՎԱԾ ՎԱՐՈՐԴԱԿԱՆ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐԻ ԺԱՄԿԵՏԸ



*2018 թվականի ապրիլի 1-ին սպառվեց մինչեւ 2006 թվականի ապրիլի 1-ը տրված վարորդական վկայականների ժամկետը:*

Վարորդական վկայականները հնարավոր է փոխել ՆԳՆ սպասարկման գործակալության ցանկացած մասնաճյուղում: Վարորդական վկայականի նորացման համար, քաղաքացիները պետք է ներկայացնեին տեղեկանք առողջական վիճակի մասին, անձնական վկայականը եւ իրենց վարորդական վկայականը:

Ասենք, որ վարորդական վկայականի նորացման արժեքը կազմում է 15 լարի, իսկ կորցրած վկայականի վերականգման համար, պետք է վճարել 35 լարի:

Մինչեւ 2006 թվականը ստացած, սակայն 2006 թվականից հետո նորացված վարորդական վկայականները պահպանում են իրենց ուժը:

Եթե մինչեւ 2018 թվականի ապրիլի 1-ը քաղաքացին չի փոխել վարորդական վկայականը, ապա նրա այդ փաստաթուղթն ավտոմատորեն համարվում է ուժը կորցրած: Քաղաքացին ավտոտրանսպորտային միջոցը վարել կարող է միայն նոր վկայականն ստանալուց հետո: Հակառակ դեպքում, Վրաստանի օրենսդրության համաձայն, սահմանված է տուգանք՝ 500 լարիի չափով:

Հատկանշական է, որ վարորդական վկայականը փոխել ցանակացողները չեն հանձնելու վկայականի ստացման համար պարտադիր տեսական եւ գործնական քննությունններ:

Ինչ վերաբերում է 2006 թվականի ապրիլի 1-ից մինչեւ 2014 թվականի ապրիլի 1-ը տրված վարորդական վկայականներին, ապա A, B, BE, T, S, A1 եւ B1 կատեգորիաների եւ ենթակատեգորիաների վկայականնեը կգործեն մինչեւ 2028 թվականի սեպտեմբերի 1-ը: Մինչեւ այդ ժամանակահատվածը, կգործեն նաեւ C, CE, D, DE, C1, C1E, D1 D1E կատեգորիաների եւ ենթակատեգորիաների վկայականները:

ՍՊՈՐՏ

## ՄԵՐ ԾԱՆՐԱՄԱՐՏԻԿՆԵՐԸ՝ ԵՎՐՈՊԱՅԻ ՉԵՄՊԻՈՆ




ԼԱՇԱ ՏԱԼԱԽԱՁԵ

Ռումինիայի մայրաքաղաքում եզրագիծը հատեց Եվրոպայի ծանրամարտի առաջնությունը:

Ինչպես հաղորդել էինք, 62 կգ քաշային կարգով, երկամարտում, ընդհանուր 299 կգ-ով, մայրցամաքի չեմպիոնի կոչումը նվաճեց Վրաստանի հավաքականի ներկայացուցիչ Շոթա Միշվելիձեն: Ծանրքաշայինների մրցաշարում ուժեղագույնը երկամարտում (457 կգ-ով) Վրաստանի թիմի եւս մեկ ներկայացուցիչ, աշխարհի չեմպիոն եւ ռեկորդակիր Լաշա Տալախաձեն էր:

Այսպիսով, Վրաստանի հավաքականը իրենց ակտիվում գրանցած 10 ոսկե, 3 արծաթե եւ 2 բրոնզե մեդալներով հաղթող ճանաչվեցին Եվրոպայի առաջնության թիմային մրցաշարում:

Հիշեցնենք, որ Ռումինիայի մայրաքաղաքում անցկացվող մրցաշարին Հակադոպինգային միջազգային կոմիտեն մասնակցելու իրավունք չտրվեց Հայաստանի, Ռուսաստանի, Թուրքիայի, Մոլդովայի, Ուկրաինայի, Բելառուսի եւ Ադրբեջանի հավաքականներին:

## 5 ՄԵԴԱԼ՝ ՁՅՈՒԴՈՅԻ ԳՐԱՆ ՊՐԻ ՄՐՑԱՇԱՐՈՒՄ

Թբիլիսիում անցկացվեց ձյուդոյի Գրան Պրի միջազգային մրցաշարը, որին մասնակցում էր 38 երկրի 150 մարզիկ:




Վրաց ձյուդոիստներ Լաշա Շավդատուաշվիլին (73 կգ) եւ Թամազ Կիրակոզաշվիլին (81կգ) դարձան Գրան Պրիի հաղթողներ:

Նույն քաշային կարգում բրոնզե մեդալ նվաճեց նաեւ Նուգզար Տատալաշվիլին՝ երրորդ տեղի համար պայքարում հաղթելով իր հայրենակից Կոբա Մճեդլիշվիլուն:

Նշենք, որ մրցաշարին մասնակից Հայաստանի ձյուդոյիստները անհաջող հանդես եկան եւ, արդյունքում, մրցանակային տեղեր չգրավեցին:

## ՌԵԳԲԻԻ ՎՐԱՍՏԱՆԻ ՊԱՏԱՆԻ ՀԱՎԱՔԱԿԱՆԸ՝ ԵՎՐՈՊԱՅԻ ՉԵՄՊԻՈՆ

Ռեգբիի Վրաստանի պատանեկան հավաքականը լեհական Գրոդինսկ քաղաքում անցկացվող Եվրոպայի առաջնության եզրափակիչ փուլում, պարտության մատնելով Ֆրանսիայի հավաքականին, առաջին անգամ դարձավ Եվրոպայի չեմպիոն:

Հատկանշական է, որ մինչ այդ մայրցամաքի առաջնության մրցաշարերում Վրաստանի պատանի ռեգբիստները 3 անգամ հանդիպել են Ֆրանսիայի հավաքականի հետ եւ 3 անգամ էլ պարտություն կրել:

ՓԱՌԱՏՈՆ

## ԿԻԵՎՈՒՄ ՎՐԱՍՏԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՐԵՑ ԱԽԱԼՔԱԼԱՔԻ «ՄՈՒՐՋԻՆ»

*Ախալքալաքիի Մշակույթի տան վրացական ժողովրդական պարերի «Մուրջի» համույթը մասնակցեց «Կիեւի դիվոկոլո» 5-րդ միջազգային փառատոնին՝ «Մենք միասին ենք» ազգային-հայրենասիրական թեմայով:*



Փառատոնին մասնակցում էին տարբեր երկրների 30 համույթներ: Վրաստանը ներկայացնում էր Ախալքալաքի «Մուրջի» համույթը:

- Հետաքրքիրն այն էր, որ երկրներից շատերը իրենց երկրների մայրաքաղաքների համույթներ էին, մոլդովացիները Քիշնեւից էին, լիտվացիները՝ Վիլնյուսից...: Մասնակցում էին 60 եւ 55-ամյա համույթներ:

Մեր համույթը ամենաերիտասարդն էր նրանց շրջանում, բայց մեզ լավ ընդունեցին բոլորը՝ ծափահարություններով, ջերմությամբ եւ մեծ հետաքրքրությամբ: Մենք կիզակենտրոնում էինք,- մեզ հետ զրույցում ասաց «Մուրջին» անսամբլի պարուսույց Գիորգի Մետրեւելին:

Մառնեուլիի մունիցիպալիտետի Չանախչի գյուղի հանրային դպրոցի աշխատակազմը եւ «Վրաստան» թերթի խմբագրությունը ցավակցում են դպրոցի տնօրեն Մանանա Մանուկյանին, սիրելի մոր՝
***Նորա Միքայելի ՄԱՆՈՒԿՅԱՆԻ***
մահվան կապակցությամբ:

## ԽԱՉԲԱՌ



***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 1.Ձմեռային մարզագույք: 4.Բարեգործ, բարերար: 11.«Վարդանանք» պատմավեպի հեղինակի անունը: 13.Հնդկաստանի քաղաքական-պետական կին գործիչ ... Գանդի: 15.«Բռնեմ դունչդ, ... շունչդ» («Գայլն ու գառը»): 16.Ախալքալաքիի երգի-պարի համույթի ղեկավար ... Ջավախք: 18.Արցախի հերոս Մոնթե Մելքոնյան: 19.Անապատ Միջին Ասիայում՝ ... Կում: 20.Տոգոյի մայրաքաղաքը: 22.Տղա, արու զավակ: 24.... Սալվադոր, ... Մարինո: 25.Միապետ, ցար: 28.Մտերմիկ, մոտիկ: 29.Առարկայի հատկանիշ: 30.Քաղաք Իրաքում: 32.Հմայվել, զմայլվել (ժող): 33.Թաղամաս Երեւանում՝ Նոր ...: 36.Կատվազգի գազան: 38.Հայոց տոմարի ամսանուն: 39.Մեծ, եզրափակիչ համերգ: 42.Մութ, խավար: 43.Անգլիացի գրող ... Կոնան Դոյլ: 44.Հայերենի հոլով: 46.Եմենի քաղաքամայրը: 49.Թագավոր, միապետ: 51.Վրաց բանաստեղծ: 53.Ժխտական նախածանց: 54.Հայկական միրգ: 55.Վրաց նկարիչ ... Փիրոսմանի: 56.Բեռնատար ընտանի կենդանի: 57.Իտալացի գրող Անդրե ...: 58.Ցուցական դերանուն:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 2.Իսպանիայի մայրաքաղաքը: 3.Մարզ Հայաստանում: 4.Քաղաք Սաուդյան Արաբիայում: 5.Հոգնակիակերտ մասնիկ: 6.Կյանք տվող, կենսատու: 7.Օժանդակ բայ: 8.Հովի. Թումանյանի «Վերնատուն» խմբակի մշտական հաճախորդ, գրող ... Աղբալյան: 9.Ոստիկանի գրածը վարորդին: 10.Արգենտինացի ֆուտբոլիստ ... Մարադոնա: 12.Բալետի պարող, բեմադրիչ ... Գալստյան: 14.Ծույլ, անբան Նազարի այլ բնորոշում: 17.Անշունչ առարկա: 21.Հարցական դերանուն: 23.Սիբիրյան գետ: 24.Լուռ մնալ, լռել, սուս մնալ: 26.Գարնան ավետաբեր թռչուն: 27.Սիրեցյալ, սիրած էակ: 28.Արամ Խաչատրյանի հանրահռչակ բալետներից: 30.Ախալքալաքիի գյուղերից: 31.Հայ ժամանակակից կոմպոզիտոր: 34.Դրախտ, աստվածային այգի: 35.Պոչ, տուտ: 37.«... Շերլոկ Հոլմսի մասին» (Կոնան Դոյլ): 40.Կոպիտ, բռի: 41.Վեպ, որը լույս է տեսել Կ.Պոլսում 1851թ., թուրքերեն, հայերեն տառերով: 45.Հայաստանի մայրաքաղաքներից: 46.Սուրբ լեռ Իսրայելում: 47.Տարվա եղանակ: 48.Հայաստանի հեռուստատեսության Առաջին ալիքի հաղորդավար ... Շլեպչյան: 49.Դերերգ օպերայում: 50.Շիրվանզադեի երկերից: 51.Երկրի անձնավորումը Հունաստանում: 52.Ժողովրդական երգ «Քելե, ...»: 55.Մեսրոպյան այբուբենի զինվոր:

*Կազմեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ*

### ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 3.Բանալի: 4.Մեքենա: 8.Գանձակեցի:11.Ապտակ: 14.Կարծր: 15.Շամիրամ: 16.Սահնակ: 17.Ռազմիկ: 21.Գիշատիչ: 22.Աբաշա: 23.Մածուն: 26.Հեռադիտակ: 27.Մախաթա: 28.Արահետ:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 1.Տարաս: 2.Աքացի: 5.Դարպաս: 6.Լատվիա: 7.Ծիածան: 9.Մարզադաշտ: 10.Պարտիզպան: 12.Սակագին: 13.Համալիր: 18.Ռիբիսի: 19.Պարադի: 20.Օխուրեյ: 24.Թելավ: 25.Սահակ:

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աքոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan@caucasus.net

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445